

**ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԳՆԱՆԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԵՄ-ԳՅԱՇՁԲ-20/1-1**

« 24 » փետրվարի 2020 թ.

**բ. Երևան**

**«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն**, ի դեմս կազմակերպության  
տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝  
Պատվիրատու), մի կողմից, և «ՆԱԵԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Ներսիսյանի, որը գործում է «ՆԱԵԿ»  
ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը  
հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տպագրական**  
աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի  
(այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական  
բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական  
բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և  
որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման  
ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը  
պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և  
պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3  
կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար  
վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Եականորեն խախտել է պայմանագիրը:  
Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Եական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված  
պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ըննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան  
կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու  
դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա  
գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ  
Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի  
5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի  
կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով  
նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում  
լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել  
Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-  
ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է  
Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման  
ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը  
Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու  
փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի  
միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող  
կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2):  
Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային

ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում արձանագրությունը և սույն պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **218 580 (երկու հարյուր տասնութ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: **Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:**

#### 5. ԿՈՐՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 6. ԱՆՀԱՐԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարգաշարժի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (ինսայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:  
7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

- Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն  ՓԲԸ,  
ք. Երևան, Բաղրամյան 78
- Հայէկոնոմբանկ  ԲԲԸ  
Հ/Հ 163007096304  
ՀՎՀՀ 00000911


(ստորագրողն է)  
Կ.Տ.  
**Տնօրենի ժ/պ. Գ. Ավետիսյան**



#### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՆԱԵՎ» ՍՊԸ,  
Արագածոտնի մարզ գ. Արագած 8-րդ  
փող. 6/2 տուն  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570025345410100  
ՀՎՀՀ 05022204

(ստորագրողն է)  
Կ.Տ.  
**Տնօրեն Լ. Արտիսյան**



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԸՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Գ/Գ	Գվտւմների պլանով նախատեսված միջոցների ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Աշխատանք						կատարման		
			Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	քանակը	ժամկետը		
1.	39263200/1	<b>Չմնան գիրք ԴՈՒ-46</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	5300	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		
2.	39263200/2	<b>Կարգավարական հրամանների գիրք ԴՈՒ-58</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն <b>Պրամանների գիրք ԴՈՒ-64</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	15900	30	Բաղրայան 78	30	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		
3.	39263200/3	250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	5300	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		
4.	39263200/4	<b>&lt;Մատյան&gt; գնացքների երթուկություն և մանրային աշխատանքների գիրք ԴՈՒ-2/</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	5300	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		
5.	22451200/2	<b>&lt;Նախագգուշացու&gt; ԴՈՒ-61</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	5300	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		
7.	39263200/6	<b>Մատյան- 2 արժակազմի տեխ-ն սիճակի մասին</b> 250գ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	530	15900	30	Բաղրայան 78	30	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 Եռամսյակ՝ 15. 03. 2020թ.		

8.	39263200/7	<p><b>ԷԼ հավաքակապակի հերթապահի սեղանի մատյան</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p> <p><b>Վագոնների նորոգման գրանցման գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 80 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	530	3180	6	Բաղրայան 78	6	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
9.	39263200/8	<p><b>Թերությունների գրանցման գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	530	10600	20	Բաղրայան 78	20	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
10.	39263200/9	<p><b>Շարժասանրուղիների կանգառումների գրանցման գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	4400	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
11.	39263200/10	<p><b>Օպերատիվ կարգադրությունների և հրամանների գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	4400	10	Բաղրայան 78	10	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
12.	39263200/11	<p><b>Տեխն. 2ահագործման և անվտանգության տեխնիկայի կանոնների հնացության ստուգման մատյան</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	13200	30	Բաղրայան 78	30	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
13.	39263200/12	<p><b>Աշխատանքի պաշտպանության վիճակի եռաստիճանի ստուգման գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	2200	5	Բաղրայան 78	5	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
14.	39263200/13	<p><b>Աշխատանքի պաշտպանության հրահանգի գրանցման գիրք</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	22000	50	Բաղրայան 78	50	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
15.	39263200/14	<p><b>Շարժասանրուղիների ամենօրյա աշխատանքների գրանցման մատյան</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	8800	20	Բաղրայան 78	20	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
16.	39263200/15	<p><b>Շարժասանրուղիների գրանցման մատյան</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	26400	60	Բաղրայան 78	60	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.
17.	39263200/16	<p><b>Շարժասանրուղիների վրա կատարված աշխատանքների գրանցման մատյան</b></p> <p>250գ/մ<sup>2</sup> ֆուտբոլի թղթ կազմով և 60 թերթ Ա4 80գ/մ<sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն</p>	հատ	440	17600	40	Բաղրայան 78	40	Պայմանագրի կլբման օրվանից՝ 20 օրացույցային օր հետո մինչև 1 եռամսյակ՝ 15.03.2020թ.

18.	39263200/17	Տեխնիկական ուսուցման գրանցման մատյան 250զ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 60 թերթ Ա4 80զ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	440	13200	30	Բաղրասյան 78	30	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև I եռամսյակ՝ 15.03.2020թ.
19.	39263200/18	Զգման կայանի սարքավորումների ստուգման մատյան 250զ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 60 թերթ Ա4 80զ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	440	17600	40	Բաղրասյան 78	40	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև I եռամսյակ՝ 15.03.2020թ.
20.	39263200/19	Հեռուստամեխանիկայով հանդերձավորված շարժասանդուղքների հսկող հերթապահի հրահանգավորման մատյան 250զ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 60 թերթ Ա4 80զ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	440	8800	20	Բաղրասյան 78	20	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև I եռամսյակ՝ 15.03.2020թ.
21.	39263200/20	Վթարա-վարժանքային խաղերի գրանցման մատյան 250զ/մ <sup>2</sup> ֆուտբոլի թղթե կազմով և 60 թերթ Ա4 80զ/մ <sup>2</sup> միջուկով, երկկողմանի տպագրություն	հատ	440	13200	30	Բաղրասյան 78	30	Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո մինչև I եռամսյակ՝ 15.03.2020թ.
		<b>Ընդամենը</b>			<b>218 580</b>				

ՊՍՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՆՈՂ

«Կալեն Դեմիրճյանի անվան Երևանի  
մետրոպոլիտեն» ՓԲԸ,  
Ք. Երևան, Բաղրասյան 78  
«Հայկեկոնսումբանկ» ԲԲԸ  
ՀՎՀՀ 05000911  
Հ/Հ 163007096304

«ՆԱԵՎ» ՍՊԸ,  
Արագածունի մարզ գ. Արագած 8-րդ փող. 6/2  
տուն

«ՆԱԵՎ» ՍՊԸ  
(սահմանափակ)  
ՀՎՀՀ 05002204  
Հ/Հ 1570028345410100



Սյուրենի ժ/պ գ. Այվեխիսյան  
Կ.Տ.  
Սյուրեն Լ. Այվեխիսյան



14	39263200/13	Աշխատանքի պաշտպանության վիճակի եռամսյակի ստուգման գիրք	0	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000
15	39263200/14	Աշխատանքի պաշտպանության հրահանգի գրանցման գիրք	0	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800
16	39263200/15	Շարժասանրոտքների ամենօրյա աշխատանքների գրանցման մատյան	0	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400	26400
17	39263200/16	Շարժասանրոտքների վրա կատարված աշխատանքների գրանցման մատյան	0	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600
18	39263200/17	Տեխնիկական ուսուցման գրանցման մատյան	0	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200
19	39263200/18	Ձգման կայանի սարքավորումների ստուգման մատյան	0	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600	17600
20	39263200/19	Հեռուստամեխանիկայով հատկործակված շարժասանրոտքների հսկող հեղթապահի հրահանգավորման մատյան	0	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800
21	39263200/20	Վթարա-վարժանքային խաղերի գրանցման մատյան	0	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200
<b>Ընդամենը</b>			0	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580	218580

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ,  
 ք. Երևան, Բաղրամյան 78  
 «Հայելուտն» ԲԲԸ  
 Հ/Հ 163007096304



**ԿԱՏԱՐՈՂ**

«ՆԱԵՎ» ՍՊԸ,  
 Արագածոտնի մարզ գ. Արագած 8-րդ փող. 6/2 տուն  
 «Ամերիկաբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 1570025345410100  
 Հ/Հ 3433 05022204



Հավելված 3  
 « » 2020թ. կնքված  
 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝  
 \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_  
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ  
 « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն  
 արձանագրությունը հետևյալի մասին.  
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանում ը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ան ժամկե տը /ըստ վճարմ ան ժամա նակա ցույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը  
 և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում  
 են:

**Աշխատանքը հանձնեց**  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
**Կ.Տ.**

**Աշխատանքը ընդունեց**  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
**Կ.Տ.**

Հավելված 2.1  
 « » 2020թ. կնքված  
 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՐՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ  
(որակավորման ապահովում)

բ. Երևան

« » փետրվարի 2020թ.

«ՆԱԵՎ»-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լիլիթ Վիգենի Ներսիսյանի, /նույնականացման քարտ՝ 005764923, տրված 13.03.2017թ.-ին 013-ի կողմից/ ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի\* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ԵՄ-ԳՀԱՇՁԲ-20/1\* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

